# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԷԿՐԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-26/15»

**ք. Տաշիր** «03» **մարտի 2026թ.**

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՁ ՌՈԼԱՆԴ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ»-ն, ի դեմս Ռ. Ջուլհակյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **գովազդային էկրանների տեղադրման և սպասարկման ծառայություններ** ի մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **23800000/քսաներեք միլիոն ութ հարյուր հազար** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական

համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման

պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան | ԱՁ Ռոլանդ Ջուլհակյան |
| ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 | ք. Տաշիր, Շահումյան փ., շ. 5, բն. 4 |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | «ՅՈՒՆԻ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| Հ/Հ 900274000075 | Հ/Հ 24163000637700 |
| ՀՎՀՀ 06966995 | ՀՎՀՀ 66960251 |
| ------------------------------ Է. Արշակյան | ------------------------------ Ռ. Ջուլհակյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 2
« 03 » մարտի 2026թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-26/15»
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 32351121/ 501 | Գովազդային էկրանների տեղադրման և սպասարկման ծառայություններ Տեխնիկական բնութագիրը տես ստորև | դրամ | 23800000 | 1 | Տաշիր համայնքի Մեծավան և Տաշիր բնակավայրեր | Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից - 31.05.2026 |

Տաշիր համայնքի Մեծավան և Տաշիր բնակավայրերում նախատեսվում է իրականացնել ժամանակակից տեղեկատվական և մեդիա կառավարման գովազդային էկրանների տեղադրման և սպասարկման ծառայություններ՝ ներառելով երկու արտաքին LED էկրանների տեղադրում և ամենօրյա պրոֆեսիոնալ սպասարկում:

Առաջին LED էկրանը տեղադրվելու է Տաշիր քաղաքի Վ. Սարգսյան 95 շենքի տանիքին՝ մոտավորապես 15 մետր բարձրության վրա՝ մետաղական շրջանակի մեջ: Էկրանի ներքին աշխատանքային չափերն են՝ 9.98 մ × 3.36 մ, ինչը ապահովում է լայնածավալ և բարձր տեսանելիությամբ ցուցադրում ամբողջ համայնքի համար:

Երկրորդ LED էկրանը տեղադրվելու է Մեծավան բնակավայրում, մոտավորապես 5 մետր բարձրության վրա՝ մետաղական հենասյուների վրա: Էկրանի չափսն է 6.08 մ × 3.36 մ, նախատեսված է օպերատիվ տեղեկատվության, սոցիալական հոլովակների և համայնքային հաղորդագրությունների ցուցադրման համար:

Գովազդային էկրանների տեղադրման և սպասարկման ծառայությունները ներառում է ոչ միայն էկրանների տեխնիկական տեղադրում, այլև դրանց ամենօրյա լիարժեք կառավարում և սպասարկում:

Կատարողի կողմից օգտագործվող ապրանքները պետք է լինեն չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:

Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի օգտագործումը պարունակում է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված «կամ համարժեք» բառերը:

Օգտագործված նյութերի, սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետ սահմանվում է ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օրացուցային օր:

Ապրանքների օրինակը մինչև մատակարարումը՝ հաղթողը պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ:

Պայմանագրի կատարման փուլում պարտադիր է ապրանքներն արտադրողից կամ վերջիններիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը:

**Գովազդային էկրանների սպասարկման ծառայությունները ներառում են**

1. **Ամենօրյա ռեժիմով տեխնիկական սպասարկում**

• Էկրանների աշխատանքի մշտադիտարկում

• Ձեռնարկվող միջոցառումներ ամպրոպի և կայծակների ժամանակ՝ ձեռքով անջատում սնուցումից

• Ձմեռային ցածր ջերմաստիճանների պայմաններում ձեռքով միացում/անջատում՝ ջերմաստիճանային ռեժիմի վերահսկմամբ

• Օպերատիվ տեխնիկական արձագանք ցանկացած խափանման դեպքում՝ 1 ժամվա ընթացքում դրանց վերացում և անխափան աշխատանքի ապահովում

2. **Բովանդակության ամենօրյա կառավարում**

• Տեսանյութերի պատրաստում և տեղադրում յուրաքանչյուր էկրանի համար

• Օրվա ընթացքում բովանդակության թարմացում
• Հաղորդագրությունների, սոցիալական և համայնքային տեղեկատվության պլանավորում

3. **Պրոֆեսիոնալ նկարահանում Տաշիր համայնքում**

• Ամեն միջոցառման տեսանկարահանում
• Օդային նկարահանում DJI դրոնով
• Պրոֆեսիոնալ նկարահանում մեր տեսախցիկներով
• Միջոցառումների ամբողջական մեդիա փաթեթավորում

4. **Պրոֆեսիոնալ մոնտաժ և գրաֆիկա**

• Տեսանյութերի բարձրորակ մոնտաժ
• Անհրաժեշտության դեպքում 3D էֆեկտների և անիմացիաների ավելացում
• After Effects և Premiere Pro ծրագրերով մասնագիտական մշակում
• Պատրաստի հոլովակների օպտիմալացում LED էկրանների տեխնիկական պահանջներին համապատասխան

Գովազդային էկրանների տեղադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերումը նպատակ ունի ապահովել Տաշիր համայնքի համար ժամանակակից, դինամիկ և պրոֆեսիոնալ մեդիա հարթակ՝ որը կգործի ամեն օր, կպահպանվի տեխնիկապես անվտանգ պայմաններում և կապահովի բարձրորակ վիզուալ ներկայացում համայնքի բոլոր միջոցառումների և տեղեկատվության համար:

**Գովազդային էկրանների տեղադրման և սպասարկման ծառայություններ մատուցման համար անհրաժեշտ սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրեր ու քանակներ**

| Անվանումը | | Տեխնիկական բնութագիրը | Քանակը |
|---|---|---|---|
| Led էկրան դրսի p4 Outdoor LED Screen P4 (բացօթյա)<br>1. Ընդհանուր տվյալներ<br>• Տեսակ՝ Բացօթյա LED էկրան (Outdoor LED Display)<br>• Պիքսել փիչ՝ P4 (4 մմ)<br>• Գունային համակարգ՝ Full Color RGB<br>• Կիրառում՝ արտաքին գովազդ, հրապարակներ, բեմեր, շենքերի ճակատներ<br>• Տեղադրում՝ մետաղական կրող կարկասի վրա | Չափեր<br>1. Ընդհանուր չափը՝ 6.08 × 3.36մ, մակերեսը՝ 20.4288քմ<br>2. Ընդհանուր չափը՝ 9.92x3.36մ, մակերեսը՝ 35.712քմ<br>• Մոդուլի չափը՝ 320 × 160 մմ<br>• Կաբինետի չափերը՝<br>• 960 × 1120 մմ<br>• 1280 × 1120 մմ | Բացօթյա LED էկրան (960×1120 մմ)-42 հատ<br>• Ջրամեկուսացված երկաթե կաբինետ – 960 × 1120 մմ<br>• Մոդուլների չափս – 21 հատ × 320 × 160 մմ<br>• Սնուցման բլոկ – 4 հատ, 220V → 5V 60A<br>• Ընդունիչ քարտ (Receiving Card) – 2 հատ Nova412-N<br>• Օդափոխիչ (Fan) – 2 հատ<br>Բացօթյա LED էկրան (1280×1120 մմ)-6 հատ<br>• Ջրամեկուսացված երկաթե կաբինետ – 1280 × 1120 մմ<br>• Մոդուլների չափս – 28 հատ × 320 × 160 մմ<br>• Սնուցման բլոկ – 5 հատ, 220V → 5V 60A<br>• Ընդունիչ քարտ (Receiving Card) – 2 հատ Nova412-N<br>• Օդափոխիչ (Fan) – 2 հատ<br>**Պատկերի որակ**<br>• Պիքսելների խտություն՝ ≥62,500 պիքսել / քմ<br>• Թարմացման հաճախականություն՝ ≥3840 Hz<br>• Մոխրագույնի խորություն՝ ≥14 bit<br>• Կոնտրաստ՝ ≥5000:1<br>• Դիտման անկյուն՝<br>• Հորիզոնական՝ ≥140°<br>• Ուղղահայաց՝ ≥120°<br>**Պայծառություն**<br>• Պայծառություն՝ ≥5500 cd/m²<br>• Օգտագործելի ուղիղ արևի լույսի տակ<br>• Ավտոմատ պայծառության կարգավորում՝ այո<br>**Էլեկտրական պարամետրեր**<br>• Սնուցում՝ AC 220V<br>• Սնուցման բլոկներ՝ 5V / 60A<br>• Միջին էներգասպառում՝ ≤350 Վտ / քմ<br>• Առավելագույն էներգասպառում՝ ≤650 Վտ / քմ<br>• Էլեկտրական պաշտպանություն՝ այո<br>**Կառավարում և սիգնալ**<br>• Receiving Card՝ NovaStar Nova412-N<br>• Վիդեո պրոցեսոր՝ Nova VX400 Pro<br>• Մուտքեր՝ HDMI / DVI / USB<br>• Կառավարման ծրագրային ապահովում՝ NovaLCT<br>• Աշխատանք՝ սինխրոն | |

| | | | |
|---|---|---|---|
| | | **Կաբինետ և սենսորներ**<br>• Կաբինետի նյութ՝ մետաղական (iron cabinet)<br>• Ջրամեկուսացում՝<br>• Առջևից՝ IP65<br>• Հետևից՝ IP54<br>• Օդափոխիչներ՝ այո<br>• Խոնավության սենսոր՝ առկա<br>• Ջերմաստիճանի (տաքացման) սենսոր՝ առկա<br>• Ավտոմատ պաշտպանություն գերտաքացման և խոնավության դեպքում՝ այո<br>**Աշխատանքային պայմաններ**<br>• Աշխատանքային ջերմաստիճան՝ -30°C ~ +45°C<br>• Խոնավություն՝ 10% – 90% (ոչ կոնդենսացիոն)<br>• Աշխատանքային ռեժիմ՝ 24/7 | |
| Մալուխներ | | Մալուխներ գործարանային / Flight power cable & Signal cable/<br>• Սնուցման մալուխ և սիգնալ մալուխ – 18 հատ | 60 |
| Վիդեո պրոցեսոր | | Վիդեո պրոցեսոր – Nova VX400 Pro (1 հատ)<br>/Video processor: Nova VX400Pro/ | 2 |
| Պահեստային մասեր (Spare parts) | | LED մոդուլ P4 – 320×160 մմ, SMD1921, 3840Hz<br>/outdoor LED module: P4 320*160mm 20S-SMD1921-3840HZ / | 60 |
| Սնուցման բլոկ | | Սնուցման բլոկ – 220V → 5V 60A/ /220V-5V 60A/ | 30 |
| Ընդունիչ քարտ | | Ընդունիչ քարտ – Nova412-N /receive card nova412-N/ | 30 |
| Մետաղական շրջանակ | | Մետաղական շրջանակ էկրանների համար ըստ չափերի՝ պատրաստված շվելերներից և անկյունակներից<br>Տաշիր բնակավայրում մետաղական շրջանակը պետք է տեղադրվի Վ. Սարգսյան 95 շենքի տանիքին, որի համար անհրաժեշտ է ապամոնտաժել տանիքի ծածկը, իրականացնել մեկաղական կոնստրուկցիայից հավաքված կարկասի տեղադրումը, այնուհետև տեղադրել տանիքի ծածկը:<br>Մեծավան բնակավայրի համար մետաղական շրջանակը պետք է տեղադրվի 5մ-ոց բետոնյա հիմքերով հենասյուների վրա:<br>Մետաղկան մասերը պետք է լինեն փոշեներկված:<br>Դիմացկունություն և անվտանգություն<br>• Տեղադրում՝ մետաղական կրող կարկասի վրա<br>• Քամու դիմադրություն՝ ոչ պակաս 30մ/վ արագությամբ քամի<br>• Կառուցվածքային ամրություն՝ նախատեսված բացօթյա մշտական շահագործման համար<br>Պատվիրատուի պահանջով Կատարողը պարտավոր է ներկայացնել կառուցված մետաղական շրջանակների կրողունակության, անվտանգության, դիմացկունության և քամու դիմադրության /30մ/վ/ վերաբերյալ լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված համապատասխանության եզրակացությունը: | 2 |
| PC | | 1) CPU (Processor)<br>AMD Ryzen 9 7950X<br>✅ 16 միջուկ / 32 թրեդ<br>2) GPU (Graphics Card)<br>NVIDIA GeForce RTX 4090 24GB<br>✅ 24 GB VRAM — մեծ texture/4K/8K playback-ների համար<br>✅ DLSS 3 + CUDA/Tensor cores<br>3) RAM 64GB DDR5-6000+ (2×32GB)<br>4) Storage<br>• 2TB PCIe Gen4 NVMe SSD (OS + software + main content)<br>• 4TB SATA/SATA SSD կամ 4TB NVMe (archive)<br>5) Power & Cooling | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| | | • PSU 1000W 80+ Gold<br>• CPU AIO Liquid Cooler (240–360mm<br>6) Motherboard<br>X670 / B650E (DDR5, PCIe4/5 ready, USB 3.2/Thunderbolt compatible)<br>7) Case Mid-Tower / Full-Tower airflow case | |
| Տաքացվող և սառեցվող պահարան կառավարման վահանակների համար | | Արտաքին չափսեր 900 × 900 × 2100 մմ<br>Նյութ  SPCC պողպատ, մետաղ<br>Պաշտպանության մակարդակ  IP55<br>Տեսակը՝Ցանցային պահարան<br>Ծագման երկիր՝Գուանդուն նահանգ, Չինաստան<br>Մոդելի համար՝ EVS2000AB<br>Ապրանքանիշ՝ EVS<br>Արտադրանքի անվանում՝Բացօթյա հեռահաղորդակցական պահարան<br>Սառեցման համակարգ՝ Պահարանի օդորակիչ / TEC / ջերմափոխանակիչ<br>Սառեցման համակարգի տեսակներ<br>• Օդորակիչ<br>• Ջերմափոխանակիչ<br>• Ֆիլտրային տիպի օդափոխիչ<br>• Օդափոխման պատուհան<br>Լրացուցիչ համալրում<br>• PDU ելք<br>• Մոնիթոր<br>• Լուսավորություն<br>• Ազդանշանային համակարգ<br>• Սենսորներ<br>(ըստ պատվերի պահանջի)<br>Ներքին տարողություն՝ 42U, 19 դյույմանոց RACK<br>Կառուցվածք՝Կրկնակի պատերով կառուցվածք՝ ջերմամեկուսիչ նյութով լցված<br>Ծառայություն (Service)<br>• OEM / ODM<br>Գույն (Color)<br>• RAL7035 | 2 |
| Drone DJI mavic 4 cinema | | Թռչող սարք<br>Թռիչքային քաշը՝մոտավորապես 1063գ<br>Չափսեր<br>• Ծալված (պտուտակներով)<br>257.6 × 124.8 × 106.6 մմ (Ե×Լ×Բ)<br>• Ծալված (առանց պտուտակների)<br>257.6 × 124.8 × 103.4 մմ (Ե × Լ × Բ)<br>• Բացված (առանց պտուտակների)<br>328.7 × 390.5 × 135.2 մմ (Ե × Լ × Բ)<br>Առավելագույն բարձրացման արագություն (Max Ascent Speed)<br>• 10 մ/վ (Sport ռեժիմ)<br>• 6 մ/վ (Normal ռեժիմ)<br>• 6 մ/վ (Cine ռեժիմ)<br>Առավելագույն իջեցման արագություն (Max Descent Speed)<br>• 10 մ/վ (Sport ռեժիմ)<br>• 6 մ/վ (Normal ռեժիմ)<br>• 6 մ/վ (Cine ռեժիմ)<br>Առավելագույն հորիզոնական արագություն<br>Ծովի մակարդակում, առանց քամու<br>• 25 մ/վ (Sport ռեժիմ)<br>• 15 մ/վ (հետևման վիճակում)<br>Ծովի մակարդակում, 2 մ/վ հետևի քամու դեպքում, քամու ուղղությամբ թռիչքի ժամանակ<br>• 27 մ/վ* (Sport ռեժիմ) | 1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • 15 մ/վ (հետևման վիճակում)<br>Առավելագույն մեկնարկային բարձրություն<br>• 6000 մ<br>DJI Mavic 4 Pro պտուտակների պաշտպանիչներով առավելագույն մեկնարկային բարձրությունը կազմում է 3000 մ:<br>Առավելագույն թռիչքային ժամանակ՝ 51 րոպե<br>Չափված է, երբ թռչող սարքը ծովի մակարդակում, առանց քամու, շարժվել է առաջ՝ 32.4 կմ/ժ հաստատուն արագությամբ, խոչընդոտների խուսափման ռեժիմը սահմանված է եղել «Brake», լուսանկարահանման ռեժիմում, և մարտկոցի լիցքավորումը եղել է 100%-ից մինչև 0%:<br>Իրական օգտագործման փորձը կարող է տարբեր լինել՝ կախված միջավայրից, օգտագործման եղանակից և firmware տարբերակից:<br>Առավելագույն կախման ժամանակ (Max Hovering Time)՝ 45 րոպե<br>Չափված է ծովի մակարդակում, առանց քամու միջավայրում, խոչընդոտների խուսափման ռեժիմը՝ «Brake», լուսանկարահանման ռեժիմում, մարտկոցի 100%-ից մինչև 0%: Իրական արդյունքները կարող են տարբերվել:<br>Առավելագույն թռիչքային հեռավորություն (Max Flight Distance)՝ 41 կմ<br>Չափված է, երբ թռչող սարքը ծովի մակարդակում, առանց քամու, շարժվել է առաջ՝ 54 կմ/ժ հաստատուն արագությամբ, խոչընդոտների խուսափման ռեժիմը՝ «Brake», լուսանկարահանման ռեժիմում, մարտկոցի 100%-ից մինչև 0%:<br>Առավելագույն քամու դիմադրություն (Max Wind Speed Resistance)՝ 12 մ/վ (39.4 ֆուտ/վ)<br>Առավելագույն թեքման անկյուն (Max Pitch Angle)՝35°<br>Աշխատանքային ջերմաստիճան (Operating Temperature) -10°C – +40°C (14°F – 104°F)<br>Գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգ (GNSS)<br>• GPS + Galileo + BeiDou<br>Կախման ճշգրտության միջակայք (Hovering Accuracy Range)<br>Ուղղահայաց<br>• ±0.1 մ (տեսողական դիրքավորման դեպքում)<br>• ±0.5 մ (արբանյակային դիրքավորման դեպքում)<br>Հորիզոնական<br>• ±0.3 մ (տեսողական դիրքավորման դեպքում)<br>• ±0.5 մ (արբանյակային դիրքավորման դեպքում)<br>Ներքին հիշողություն (Internal Storage)<br>• Mavic 4 Pro – 64 ԳԲ (օգտագործելի մոտ 42 ԳԲ)<br>• Mavic 4 Pro 512GB (Creator Combo) – 512 ԳԲ (օգտագործելի մոտ 460 ԳԲ)<br>Դասակարգում (Class)<br>• C2 (ԵՄ)<br>Տեսախցիկ (Camera)<br>Պատկերի սենսոր (Image Sensor)<br>• Hasselblad տեսախցիկ<br>4/3 CMOS, արդյունավետ պիքսելներ՝ 100 ՄՊ<br>• Միջին հեռա տեսախցիկ<br>1/1.3" CMOS, արդյունավետ պիքսելներ՝ 48 ՄՊ<br>• Հեռա տեսախցիկ<br>1/1.5" CMOS, արդյունավետ պիքսելներ՝ 50 ՄՊ<br>Ոսպնյակներ (Lens)<br>Hasselblad տեսախցիկ<br>• Տեսադաշտ (FOV)՝ 72°<br>• Համարժեք ձևաչափ՝ 28 մմ<br>• Դիֆրագմա՝ f/2.0 – f/11<br>• Ֆոկուս՝ 2 մ – ∞<br>Միջին հեռա տեսախցիկ<br>• Տեսադաշտ՝ 35°<br>• Համարժեք ձևաչափ՝ 70 մմ<br>• Դիֆրագմա՝ f/2.8 | |

| | | | |
|---|---|---|---|
